Սպանությունների
ԱԿՈՒՄԲ
ամեն հինգշաբթի

ՎԵՊ

Bookmark

ՌԻՉԱՐԴ ՕՍՄԱՆ

Սպանությունների ԱԿՈՒՄԲ ամեն հինգշաբթի

ՎԵՊ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Աթաբեկյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2023

Bookmark

RICHARD OSMAN

The Thursday MURDER Club

NOVEL

Bookmark

ՀՏԴ 821.111-31 Օսման
ԳՄԴ 84(4Մբ)-44
Օ-670

Օսման Ռիչարդ
Օ-670 Սպանությունների ակումբ՝ ամեն հինգշաբթի: Վեպ / Ռ. Օսման.- Եր.: Newmag, 2023.- 496 էջ:

Գյուղական խաղաղ բնակավայրի չորս թոշակառուներ՝ մոտ ութսուն տարեկան, շաբաթը մեկ հավաքվում ու քննարկում են սպանությունների չբացահայտված գործերը: Էլիզաբեթը, Ջոյսը, Ռոնը և Իբրահիմն իրենց անվանում են «Սպանությունների ակումբ՝ ամեն հինգշաբթի»: Մի օր էլ լսում են, որ իրենց ավանում իրական հանցագործություն է կատարվել. սպանվել է ավանի շինարարը, իսկ դիակի կողքին առեղծվածային լուսանկար են գտել: Սպանությունների ակումբն անմիջապես գործի է անցնում: Շուտով դիակների թիվը ավելանում է: Հանձարեղ քառյակը կհասցնի՞ բացահայտել մարդասպանին, քանի ուշ չէ:

ՀՏԴ 821.111-31 Օսման
ԳՄԴ 84(4Մբ)-44

Գլխավոր գործընկեր՝
ԶԱՆԳԱԿ ԳՐԱՏՈՒՆ
zangakbookstore.am

ISBN 978-9939-884-80-6
Ռիչարդ Օսման «Սպանությունների ակումբ՝ ամեն հինգշաբթի» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
The Thursday Murder Club Copyright © 2020 by Richard Osman All rights reserved.

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Բովանդակություն

Մաս I Նոր ծանոթություններ 11

Մաս II Այստեղ բոլորն էլ
պատմելու բան ունեն 237

Bookmark

Մայրիկիս՝ «վերջին փրկված Բրենդային»՝ սիրով

Bookmark

Սպանելը հեշտ է: Սովորաբար մարմինը թաքցնելն է դժվար: Բոլորը հենց դրա վրա էլ բռնվում են:

Բախտս բերեց. կարգին տեղ գտա: Կատարյալ տեղ է, ազնիվ խոսք:

Ժամանակ առ ժամանակ վերադառնում եմ այնտեղ, ուղղակի ստուգում՝ ամեն ինչ կարգին է, թե չէ: Առայժմ ամեն ինչ լավ է, ու, հուսով եմ, այդպես էլ կշարունակվի:

Երբեմն ծխում եմ, թեև հասկանում եմ, որ չի կարելի, բայց դա իմ միակ արատն է:

Bookmark

ՄԱՍ I

Նոր ծանոթություններ

Bookmark

1
Գոյս

Դե ինչ, սկսենք Էլիզաբեթից: Տեսնենք, թե դրանից ինչ կըստացվի:

Իհարկե, ես ճանաչում էի նրան. այստեղ բոլորն են ճանաչում Էլիզաբեթին: Լարքին Քորթի* երեք ննջասենյակով բնակարաններից մեկը նրանն է: Անկյունում՝ փոքրիկ պատշգամբով: Բացի այդ՝ մի անգամ վիկտորինայում Սթիվենի թիմում եմ խաղացել, իսկ նա, մի շարք հանգամանքների բերումով, Էլիզաբեթի երրորդ ամուսինն է:

Ճաշի ժամ էր՝ մոտ երկու-երեք ամիս առաջ, հավանաբար՝ երկուշաբթի, որովհետև հովվական կարկանդակ էին մատուցել: Էլիզաբեթն ասաց, որ հասկանում է՝ ճաշում եմ, բայց ուզում է հարց տալ դանակով վերքի մասին, եթե, իհարկե, հարմար է:

— Իհարկե, ոչ մի խնդիր, հարցրե՛ք,– ասացի ես (այսպես կամ նման ձևով եմ պատասխանել): Միանգամից ասեմ՝ միշտ չէ, որ ամեն ինչ հստակ եմ հիշում: Մի խոսքով, նա բացեց թղթապանակը, ու ես տեսա մեքենագրած էջեր. կարծես հին լուսանկարների ծալմլված անկյուններ լինեին: Հետո անցավ բուն թեմային:

---

* Գյուղում բազմաբնակարան շենքերը հայտնի գրողների անուններ ունեին՝ Լարքին, Ռասքին, Ուորդսուորթ:

Էլիզաբեթն ինձ խնդրեց պատկերացնել, որ մի աղջկա դանակով հարվածել են: Ես հարցրի, թե ինչ դանակով, նա էլ ասաց՝ երևի թե սովորական՝ խոհանոցային: «Ջոն Լյուիս»: Ապրանքանիշը չասաց, բայց առաջինը դա միտքս եկավ: Հետո խնդրեց պատկերացնել, որ աղջկան երեք-չորս անգամ են խփել, ուղիղ՝ կրծքավանդակին: Հանել են դանակը, նորից խփել, հանել, նորից խփել, նողկալի վերքեր բացել, բայց զարկերակին չեն դիպել: Բավական ցածր էր խոսում, որովհետև մարդիկ ուտում էին, իսկ նա բարեկրթության սահմաններից երբեք դուրս չէր գալիս:

Եվ ահա, երբ պատկերացրի դանակով վնասվածքները, Էլիզաբեթը հարցրեց, թե աղջիկն ինչքան ժամանակում արնաքամ կլիներ:

Ի դեպ, պիտի ավելի շուտ ասեի. երկար տարիներ բուժքույր եմ աշխատել: Եթե չասեի, այս խոսակցությունը տարօրինակ կթվար: Էլիզաբեթն ինչ-որ տեղից իմացել էր այդ մասին. դե, նա ամեն ինչ գիտի: Մի խոսքով, հենց դրա համար էլ հարցնում էր: Դուք երևի չեք հասկանում, թե ինչու եմ պատմում այս ամենը: Խոստանում եմ՝ ամեն ինչ կբացատրեմ:

Հիշում եմ, թե նախքան պատասխանելն ինչպես սեղմեցի շուրթերս. հեռուստացույցով շատ եմ տեսել: Փորձե՛ք, այդպես ավելի խելացի կերևաք: Հարցրի, թե աղջկա քաշն ինչքան էր:

Էլիզաբեթը թղթապանակում գտավ անհրաժեշտ թուղթը, մատը սահեցրեց տեքստի վրայով ու բարձրաձայն կարդաց, որ աղջկա քաշը քառասունվեց կիլոգրամ էր: Երկուսս էլ շփոթվեցինք. մեզնից ոչ մեկը չգիտեր, թե քառասունվեց կիլոգրամը չափման մեր միավորներով ինչքան է: Մտքումս

հաշվեցի՝ մոտավորապես քսաներեք սթոուն* կլինի: Ուրեմն, երկուսը մեկին պետք է հաշվել: Բայց միանգամից գլխի ընկա, որ շփոթել եմ դյույմերի ու սանտիմետրերի հետ:

Էլիզաբեթն ինձ տեղեկացրեց, որ աղջկա քաշը հաստատ այդքան չի եղել. թղթապանակում կար նաև դիակի լուսանկարը: Թղթապանակն ինձ մեկնեց, հետո շրջվեց սրահի կողմն ու ասաց.

— Մեկնումեկդ Բեռնարդին հարցրե՛ք՝ քառասունվեց կիլոգրամն ինչքա՞ն է:

Բեռնարդը միշտ մենակ էր նստում ներքին բակին մոտ փոքր սեղանի առաջ: Սեղան՝ համար ութ: Գուցե կարիք չկա, բայց մի քիչ պատմեմ Բեռնարդի մասին:

Բեռնարդ Քոթլը շատ սիրալիր էր իմ հանդեպ, երբ տեղափոխվեցի Քուփերս Չեյզ: Մի փունջ կլեմատիս բերեց ու բացատրեց աղբը տանելու կարգը: Այստեղ չորս տարբեր գույնի աղբարկղեր կան: Պատկերացնո՞ւմ եք, չո՜րս: Բեռնարդի շնորհիվ հիմա գիտեմ, որ կանաչն ապակու համար է, իսկ կապույտը՝ ստվարաթղթի ու թղթի: Ինչ վերաբերում է կարմրին ու սևին, փորձե՛ք գուշակել՝ ինչպես ես արեցի: Զբոսնելիս ի՜նչ ասես, որ չեմ տեսել: Արկղերից մեկի մեջ ինչ-որ մեկը ֆաքսի սարք էր գցել:

Բեռնարդը ժամանակին ինչ-որ բնական գիտության պրոֆեսոր էր եղել, աշխատել էր ամբողջ աշխարհում, նույնիսկ Դուբայում էր եղել այն ժամանակ, երբ ոչ ոք դրա մասին չէր էլ լսել: Զարմանալի չէր, որ ճաշի գալիս էր կոստյումով ու

* Սթոուն, բրիտանական չափման միավոր, սովորաբար կիրառվում է, երբ խոսքը մարդու մարմնի քաշի մասին է: Հավասար է մոտավորապես 6,35 կիլոգրամի:

փողկապով, բայց միևնույն ժամանակ Daily Express էր կարդում: Մերին՝ Ռասքին Քորթից, որը հարևան սեղանի մոտ էր նստած, շեղեց նրա ուշադրությունն ու հարցրեց, թե քառասունվեց կիլոգրամը քանի սթոուն է:

Բեռնարդը գլխով արեց ու դարձավ Էլիզաբեթին.

— Յոթ ու երեքից մի քիչ ավելի:

Ահա, սա էլ՝ մեր Բեռնարդը:

Էլիզաբեթը շնորհակալություն հայտնեց նրան ու ասաց, որ կարծես թե ճիշտ է ստացվում, իսկ Բեռնարդը շարունակեց խաչբառ լուծել: Հետո ես ստուգեցի սանտիմետրերն ու դյույմերը, համոզվեցի, որ առնվազն այդ հարցում չեմ սխալվել:

Էլիզաբեթը վերադարձավ հարցին: Խոհանոցային դանակով վնասվածքներից հետո աղջիկն ինչքա՞ն ժամանակ կապրեր: Ենթադրեցի, որ եթե ոչ ոք օգնության չհասներ, երևի թե մոտ քառասունհինգ րոպեից կմեռներ:

— Համաձայն եմ, Ջո՛յս,– ասաց, հետո ուրիշ հարց տվեց, – իսկ եթե աղջկան բժշկական օգնությո՞ւն ցուցաբերեին: Ոչ թե բժիշկ, այլ մեկը, որը կարող էր վիրակապել: Ասենք, բանակում ծառայած մեկը: Ի՞նչ կասես:

Ժամանակին ես բազմաթիվ կտրած վերքեր եմ տեսել: Իմ աշխատանքը չի սահմանափակվել միայն ձգված կոճեր բուժելով: Դե, դրա համար էլ ասացի, որ այդ դեպքում չէր մեռնի: Ու իսկապես չէր մեռնի: Ճիշտ է, ծանր վերք էր, բայց վիրակապելը մեկ անգամ մեկ կլիներ:

Էլիզաբեթը գլուխը տմբտմբացրեց ու ասաց, որ նույն բանն էլ ինքն է ասել Իբրահիմին: Այն ժամանակ ես դեռ չէի ճանաչում նրան: Ինչպես արդեն ասացի, այդ խոսակցությունից մեկ-երկու ամիս է անցել: